Հաստատում եմ
Տնօրեն Ջ. Մովսիսյան

# Աշխատանքային Պլան

«Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ – ի

2023 - 2024 ուստարվա

Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ

Փոխտնօրեն՝ Գ. Սարգսյան

Գյումրու թիվ 9 հիմնական դպրոց
ՊՈԱԿ-ի դաստիարակության գծով
փոխտնօրենի աշխատանքային պլանը
կազմված է հետևյալ բաժիններից

1. Ժամանատախտակ
2. Դասղեկ-դասվարների ցուցակ
3. Ուսումնական տարվա ընթացքում դաստիարակչական աշխատանքների ուղղությամբ անելիքներն ու խնդիրները
4. Կազմակերպչական աշխատանք
5. Ուսումնական աշխատանք
6. Գեղագիտական դաստիարակություն
7. Տաղանդի բացահայտման, ինտելեկտի խթանման աշխատանքներ
8. Ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակություն
9. Աշխատանքային դաստիրակություն
10. Էկոլոգիական դաստիարակություն
11. Բարոյաիրավագիտական դաստիարակություն
12. Սեմինարների, քննավեճերի, հանդիպումների կազմակերպում
13. Ծնողական խորհուրդ
14. Աշակերտական խորհուրդ

1.Դասղեկ - դասվարների ցուցակ

| Հ/Հ | Ազգանուն , անուն | Դասարան |
|---|---|---|
| 1 | Մկրտչյան Լուսինե | I Ա |
| 2 | Գրիգորյան Թագուհի | II Ա |
| 3 | Սամվելյան Կալիպսե | II Բ |
| 4 | Ասլանյան Ալլա | III Ա |
| 5 | Մխիթարյան Շողիկ | IV Ա |
| 6 | Մկրտչյան Լուսինե | IV Բ |
| 7 | Բայաթյան Նարինե | V Ա |
| 8 | Կարապետյան Մերի | V Բ |
| 9 | Պողոսյան Ժասմենա | VI Ա |
| 10 | Հարոյան Անահիտ | VII Ա |
| 11 | Գյուլյան Սարգիս | VII Բ |
| 12 | Սարգսյան Քրիստինե | VIII Ա |
| 13 | Մնացյան Գոհար | IX Ա |
| 14 | Գալստյան Սվետլանա | IX Բ |

Փոխտնօրեն՝ Գ. Սարգսյան

## 1.ԺԱՄԱՏԱԽՏԱԿ

| 1-ին հերթ | Դասի տևողությունը | Դասամիջոց |
|---|---|---|
| 1 | $9^{00} – 9^{45}$ | 5 |
| 2 | $9^{50} – 10^{35}$ | 5 |
| 3 | $10^{40} – 11^{25}$ | 5 |
| 4 | $11^{30} – 12^{15}$ | 5 |
| 5 | $12^{20} – 13^{05}$ | 5 |
| 6 | $13^{10} – 13^{55}$ | 5 |
| 7 | $14^{00} – 14^{45}$ | 5 |
| 8 | $14^{50} – 15^{35}$ | 5 |
| 9 | $15^{40} – 16^{25}$ | |

Փոխտնօրեն՝ Գ. Սարգսյան

Դաստիարակության խնդիրները վերաբերում
են ամբողջ ազգին,
պետությանն ու հասարակությանը

Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչն է: Դպրոցում դաստիարակչական աշխատանքները ուղղորդված են ազատ քաղաքացու դաստիարակության ձևավորմանը, նրա ինտելեկտուալ ընդունակությունների զարգացմանը, աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի ձևավորմանը, անձնական պատասխանատվության բարձրացմանը համաշխարհային և ազգային արժեքների պահպանմանը:

3. Ուսումնական տարվա ընթացքում դաստիրակաչական աշխատանքների ուղղությամբ անելիքներն ու խնդիրները.
    - Կրթության համակարգում արմատավորել ժողովրդավարական հարաբերություններ, աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները կառուցել գործընկերային հիմքի վրա, ընդլայնել դասի դաստիարակչական գործառույթը:
    - Աշակերտներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, ձևավորել դրանց համադրման և արժեվորման կարողություններ, դաստիարակել հայրենասիրություն և հումանիզմի գաղափարներ: Դաստիարակել հայրենասեր քաղաքացիներ:
    - Ձևավորել գիտակցական վերաբերմունք առողջ ապրելակերպի նկատմամբ:
    - Ուսումնասիրելով աշակերտների հոգեբանական առանձնահատկություններն ու կարողությունները հակումներն ու հետաքրքրությունները շերտավորված աշխատանք տանել չառաջադիմող, ծնողակա[illegible] հսկողությունից դուրս մնացած աշակերտների հետ: Աշակերտների մե[illegible] բարձրացնել բարոյական հատկանիշները. Հայրենասիրություն, սեր բնության, աշխատանքի, արհեստների, արվեստի, գրականությա[illegible] մշակույթի նկատմամբ, հարգանք ծնողների, ուսուցիչներ[illegible] մեծահասակների նկատմամբ: Զարգացնել սովորողներ[illegible] ստեղծագործական ունակությունները:
    - Դպրոցական ինքնավարության կատարելագործում:
    - Արտադասարանական, արտադպրոցական լրացուցիչ կրթությ[illegible] պայմանների ապահովում: Կազմակերպել ցերեկույթնե[illegible]

հանդիպումներ, զրույցներ, որոնք կնպաստեն աշակերտների բազմակողմանի զարգացմանը:

- Դասղեկների մասնագիտական վարպետության բարձրացում:
- Դպրոց-ընտանիք կապի ամրապնդում, ծնողների ներգրավում դպրոցական կյանքի, դպրոցի ղեկավարման ոլորտի մեջ, նրանց մասնակցությունը դաստիարակչական գործընթացին, ծնողական խորհրդի դերի բարձրացում:
- Իրավական դաստիարակության շրջանակներում Շիրակի մարզային անչափահասների վարչության հետ աշխատանքային պլանի մշակում:
- Կարևորել դասերի դաստիարակչական ուղղվածությունը:
- Ուշադրության կենտրոնում պահել գաղափարական հասունության, կրոնական, առողջապահական, իրավական, գեղագիտական դաստիարակության հարցերը: Հոգևոր դաստիարակության և կրոնի ուսուցման կազմակերպում աշակերտին զերծ պահել աղանդներից:
- Աշակերտների՝ հոգեբանական վերականգնողական աշխատանքի կազմակերպում:
- Պատրաստել նրանց կյանքի, աշխատանքի, կրթության հետագա շարունակման համար, քաղաքացիության և քաղաքական ակտիվության զգացմունք դաստիարակել:
- Դաստիարակչական ամեն մի խնդրի բովանդակությունը տալ աշակերտների տարիքային առանձնահատկություններին համա-պատասխան: Հասցնել այն բանին, որ համատեղ գործունեությամբ և փոխադարձ օգնությամբ բոլոր դասարանները միավորող համադպրոցական աշակերտական կոլեկտիվ կազմակերպվի դաստիարակությանը նպաստող գործունեությամբ:
- Սովորեցնել, որ բարձր դասարանցիները ինքնագիտակցորեն, ինքնադաստիարակչորեն հաղթահարեն իրենց թերությունները, զբաղվեն ինքնակրթությամբ:

## 4. Կազմակերպչական աշխատանք

| ՀՀ | Աշխատանքի բովանդակություն | Ժամկետ | Կատարող անձ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Տոնականորեն կազմակերպել <<1-ին զանգ>> հանդիսավոր արարողությունը | 01.09.2021 | Սարգսյան Գ. | |
| 2 | Կազմակերպել և վերահսկել Աշակերտական , ուսուցչական և դասղեկական հերթապահությունը | Մշտական | | |
| 3 | Սեպտեմբերի 1-ը նշել որպես <<Գիտելիքի օր>> | Մշտական | | |
| 4 | Անցկացնել զրույցներ և սեմինար պարապմունքներ դասղեկ-դասվարների դաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպման ապահովման համար | Մշտական | | |
| 5 | Սահմանել վերահսկողություն դասղեկների աշխատանքներին | Մշտական | | |
| 6 | Սկսնակ դասղեկներին ցույց տալ մեթոդական օգնություն | Մշտական | | |
| 7 | Հետևել դասագրքերի դասաբաշխմանը | Սեպտեմբեր | | |
| 8 | Հրավիրել ծնողկոմիտեների նախագահներին ընտրելու դպրոցի ծնողակա խորհրդի նախագահ | Հոկտեմբեր | | |
| 9 | Ստեղծել դպրոցի աշակերտական խորհրդի նախագահ | Հոկտեմբեր | | |
| 10 | Հրավիրել և վերահսկել ծնողական ժողովներ, ներկա լինել դրանց, լսել ծնողների պահանջները, առաջարկությունները, հնարավորության սահմանում ընթացք տալ | Մշտական | | |
| 11 | Ամսվա ընթքցքում 1-2 անգամ ստուգել օրագրերի, գրենական պիտույքների, պայուսակների առկայությունը, վերահսկել թե ինչպես է ապահովվում դպրոց-ծնող-աշակերտ կապը դրանցով | Մշտական | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12 | Կազմակերպել շաբաթօրյակներ: Կատարել դասասենյակների սանիտարական վիճակի և գույքի պահպանման ամենօրյա գնահատում: | Տարվա ընթացքում | Աշակերտական խորհուրդ | |
| 13 | Վերահսկել արտադասարանական խմբակների մեջ ընդգրկված աշակերտների աշխատանքը, սերտ համագործակցել այդ հաստատությունների հետ | մշտական | | |
| 14 | Հոգ տանել գրադարանային ֆոնդ ստեղծելու մասին | մշտական | | |
| 15 | Կազմել դասղեկական օրերի և ժամերի կարգացուցակը | սեպտեմբեր | Բունիաթյան | |
| 16 | Անցկացնել զրույց առաջին դասարանցիների հետ | սեպտեմբեր | դասվարներ | |
| 17 | Սկսել աշխատանք <դժվար> դաստիարակվող աշակերտների հետ, յուրաքանչյուրի հետ մեկ ուսուցիչ, տանել նրանց հետ լայն բացատրական աշխատանք | մշտական | դասղեկներ | |
| 18 | Բացատրական և դաստիարակչական աշխատանք տանել այլ դպրոցներից եկած աշակերտների հետ | մշտական | | |
| 19 | Հետևել արդի պայմաններին և պահանջներին համապատասխան դաստիարակչական աշխատանքի պլանների կազմմանն ու դրա իրականացմանը | մշտական | | |
| 20 | Հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին | մշտական | Բուժքույր | |
| 21 | Հետևել աշակերտական խորհրդի աշխատանքներին | մշտական | | |
| 22 | Հետևել աշակերտների հաճախումներին, վերացնել անհարգելի բացակայությունները և ուշացումները | մշտական | | |
| 23 | Նորացնել ծնողազուրկ և սոցիալապես անապահով աշակերտների ցուցակ | սեպտեմբեր | Սարգսյան Գ. | |
| 24 | Վերստուգել աշակերտների անձնական գործերը | մշտական | | |
| 25 | Դասղեկների հետ քննարկել Ռ.Մուրադյանի <Դասղեկ> գիրքը և գործածել այն | հոկտեմբեր | Սարգսյան Գ. Դասղեկներ | |

## 5. Ուսումնական աշխատանք

| ՀՀ | Աշխատանքի բովանդակություն | Ժամկետ | Կատարող անձ | Ծ նւ ու ու |
|---|---|---|---|---|
| 1 | Կատարել դասալսումներ որոշակի նպատակադրմամբ, մասնակցել արտադասարանական պարապմունքներին | մշտական | Սարգսյան Գ. | |
| 2 | Սովորողներին արտադասարանական պարապմունքներին մասնակից դարձնել ըստ նախասիրությունների | մշտական | Սարգսյան Գ | |
| 3 | Քննարկել ուսման մեջ թերացող սովորողների հարցերը, ուսումնասիրել և քննարկել դասագրքերի պահպանման վիճակը | մշտական | Սարգսյան Գ. | |
| 4 | Դասղեկների հետ հանդիպման ժամանակ հանդես գալ <Դասղեկի դերը աշակերտների մեջ գիտելիքների որոշակի բարձրացման և կարգապահության ամրապնդման գործում> զեկուցումով և այն դարձնել երկխոսություն | մշտական | Սարգսյան Գ | |
| 5 | Գիտելիքների նկատմամբ դպրոցականների հետաքրքրությունների բարձրացման նպատակով անցկացնել գրական, երաժշտական, հոգևոր զրույցներ, զեկուցումներ, ցերեկույթներ | մշտական | Սարգսյան Գ | |

## Ծ. Գեղագիտական դաստիարակություն

| << | Աշխատանքի բովանդակություն | Ժամկետ | Կատարող անձ | Ծւ նո ույ ուն |
|---|---|---|---|---|
| 1 | Էսթետիկական դաստիարակության զարգացման համար կազմակերպել էքսկուրսիաներ դեպի գեղագիտական կենտրոններ | մշտական | Սարգսյան Գ. | |
| 2 | Կազմակերպել միջոցառում <Սեպտեմբերի 21-ը Անկախության օրն է> խորագրով | սեպտեմբեր | Մնացյան Գ | |
| 3 | Կազմակերպել բանավեճ <Ինչու՞ են բոլորը սիրում գեղեցիկը> և <Սեր ու մտերմություն> թեմաների շուրջ | նոյեմբեր | Սարգսյան Գ. | |
| 4 | Հանդիպում Գյումրու դրամատիկական թատրոնի աշխատակիցների հետ | Դեկտեմբեր | Սարգսյան Գ Վիրաբյան Ա | |
| 5 | I – IY դասարանցիների համար կազմակերպել տիկինիկային թատրոնի ներկայացումների դիտում և քննարկում | Մշտական | Դասվարներ | |
| 6 | Y - IX դասարաններում կազմակերպել թատրոնի դիտում | Մշտական | Դասղեկներ | |
| 7 | Կազմակերպել էքսկուրսիա թանգարաններ | Մշտական | Սարգսյան Գ | |
| 8 | Կազմակերպել միջոցառում նվիրված թարգմանչաց տոնին | նոյեմբեր | Խլղաթյան Գ | |
| 9 | Կազմակերպել ամանորին նվիրված ցերեկույթ | դեկտեմբեր | Աշակերտական խորհուրդ | |
| 10 | <Գարուն> <Մարտի 8-ը մայրության օրն է> թեմաներով անցկացմել գրական-երաժշտական ցերեկույթներ | Մարտ | Աշակերտական խորհուրդ | |
| 11 | Աշակերտական և ծնողական խորհրդի նիստերում քննարկել <Լավագույն աշակերտ>, <Լավագույն ուսուցիչ> <Լավագույն դասղեկ> մրցակարգերին ներկայանալու խնդիրը | Մայիս | Ծնողական խորհուրդ | |
| 12 | <Ապրիլի 7-ը գեղեցկության օր է> թեմայով | Ապրիլ | | |
| 13 | Անցկացնել միջոցառումների շարք <Ապրիլի 24-ը հիշատակի օր է> խորագրով | Ապրիլ | Աշակերտական խորհուրդ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Անցկացնել միջոցառում նվիրված մայիսի 28-ի Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրման օրը | Մայիս | Հարությունյան Ս. | |
| 15 | Համձնարարել դասղեկներին կազմակերպելու դասարանական միջոցառումներ, գրույցի բաց դասեր, մասնակցել համադպրոցական բոլոր միջոցառումներին | Մշտական | դասղեկներ | |

| ՀՀ | Աշխատանքի բովանդակություն | Ժամկետ | Կատարող անձ | Ծա նո ոպ ու |
|---|---|---|---|---|
| 1 | Անցկացնել ստեղծագործողների, ասմունքողների, երգի և պարի մրցույթներ | մշտական | Սարգսյան Գ. | |
| 2 | Ստեղծագործողների ցուցահանդեսներ կազմակերպել դասասենյակներում | մշտական | Սարգսյան Գ. | |
| 3 | Նախասիրական պարապմունքներում ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունը, կոնկրետ աշխատանքների ցուցադրմամբ ինքնահաստատում ձեռք բերել | մշտական | Սարգսյան Գ. | |
| 4 | Սովորողներին ընդգրկել դասարանական, դպրոցական սպորտային միջոցառումներին | մշտական | Սարգսյան Գ. | |
| 5 | Գիտության, մշակույթի համաշխարհային գանձարանի հետ հաղորդակցության տարբեր եղանակներ մշակել | մշտական | Սարգսյան Գ. | |
| 6 | Խաղերի, տրամաբանական, սրամտությունների մրցույթների կազմակերպում, դրանց քննարկում | մշտական | Սարգսյան Գ. | |

8. Ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերաբերմունք

| ՀՀ | Աշխատանքի բովանդակություն | Ժամկետ | Կատարող անձ | Ծա<br>նոթ<br>ութ<br>ուն |
|---|---|---|---|---|
| 1 | Կազմակերպել գրական երաժշտական ցերեկույթ նվիրված ՀՀ Անկախության օրվան | սեպտեմբեր | Կիրակոսյան Հ. | |
| 2 | Ուստարվա ընթացքում կազմակերպել հանդիպումներ ՀՀ բանակում ծառայած դպրոցի նախկին սաների հետ, անցկացնել զրույցներ՝ աշակերտներին ծանոթացնելով նրանց զինվորական առօրյայի հետ, ինչպես նաև այցելել զորամասեր | Հունվար փետրվար | Սարգսյան Գ.<br>Կիրակոսյան Հ. | |
| 3 | Բոլոր դասարաններում անցկացնել զրույցներ, զեկուցումներ անկախության օրվա առթիվ | սեպտեմբեր | դասղեկներ | |
| 4 | Աշակերտների մեջ դաստիարակել հայրենասիրություն՝ օրինակ բերելով մեր նախնիների, հայդուկների, արցախյան գոյամարտի հերոսների կատարած սխրագործություններից: Այդ նպատակով կազմակերպել հետևյալ միջոցառումները.<br>ա/ ֆիդայիները մեր անցյալն ու ներկան են<br>բ/ Հայրենիքի ուժը<br>գ/ Նժդեհի վերադարձը<br>դ/ Ես չգիտեի, որ վերջինը կլինեմ Դրո: | մշտական | Աշակերտական խորհուրդ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ցերեկույթ նվիրված Ավարայրի ճակատամարտին | | | |
| 6 | Վերահսկել ֆիզկուլտուրայի և ռազմագիտության դասաժամերը | մշտական | Սարգսյան Գ. | |
| 7 | Այցելություն Գյումրու ազատամարտիկների թանգարան | | [illegible] | |
| 8 | Շախմատի միջդասարանական մրցումներ | փետրվար | Շարյան Ե | |
| 9 | Դասղեկի ժամերին զրույց <ՄԻԱՎ ՁԻԱՀ>-ի վտանգի մասին | Տարվա ընթացքում | Բուժքույր | |
| 10 | Դասղեկի բաց ժամ <Առողջ ապրելակերպ> խորագրով | Մարտ | Գյուլյան Ս | |

## 9. Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային հմտությունների և<br>կառուցողական վերաբերմունքի<br>խթանում

| | Աշխատանքի բովանդակություն | Ժամկետ | Կատարող անձ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| | Կազմակերպել երևույթների, դեպքերի, միջադեպերի ընկալման, վերլուծման կարողության մշակում, բանավիճելու, քննարկելու սեփական կարծիք և համոզմունքներ ունենալու, համադրելու կարողությունների կատարելագործում | մշտական | Սարգսյան Գ<br>Թումանյան Հ. | |
| | Երեխաների մեջ դաստիարակել ազատ, անկախ ապրելու զգացում, բարեգթության, փոխօգնության գաղափարներ, մեկնաբանել մարդասիրության պատրաստակամություն | մշտական | Սարգսյան Գ.<br>Թումանյան Հ. | |
| 3 | Մեր երկրի անցյալին հետևողականորեն ծանոթացնելու համար անցկացնել միջոցառումների բանավեճերի շարք՝ <Մեր հետքրքրությունների աշխարհը>, <Ո՞րն է ամենալավ մասնագիտությունը /մասնագիտական կողմնորոշում/> թեմաներով | մայիս | դասղեկներ | |
| 4 | Հարցաթերթի լրացում <Ես ուզում եմ դառնալ.....> , <Իմ երազած մասնագիտությունն է......> | մայիս | | |
| 5 | Համադպրոցական շաբաթօրյակների կազմակրպում /դասարան, բակ, կանաչ տարածքների խնամք/: | Ուստարի | | |
| 6 | Հոգեբանամանկավարժական աշխատանք մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ | Ուստարի | | |

# 10.Էկոլոգիական դաստիարակություն

Բնության հանդեպ հոգատար
վերաբերմունքի ձևավորում

| << | Աշխատանքի բովանդակություն | Ժամկետ | Կատարող անձ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Աշակերտների միջոցով սանիտարական նորմալ վիճակում պահել դպրոցի շրջակայքը, շենքը: Աշակերտների միջոցով կազմակերպել դպրոցական գույքի, դասասենյակների վերանորոգման աշխատանքերը | Տարվա ընթացքում | Աշակերտական խորհուրդ | |
| 2. | Կազմակերպել միջոցառումներ-տոնակատարություններ <Ոսկե աշուն> <Թռչնի օր> թեմներով: | Նոյեմբեր | Աշակերտական խորհուրդ | |
| 3 | Անցկացնել զրույցներ <<Հայաստանի Կարմիր գրքի շուրջ>, դեղաբույսերի նկատմամբ հոգատար վերաբերմունքի թեմաների շուրջ: | ուստարի | Զավուշյան Ժ | |
| 4 | Մասնակցել համաքաղաքային շաբաթօրյակներին և ծառատունկերին | ապրիլ | Սարգսյան Գ | |
| 5 | Բնապահպանական թեմաներով ցերեկույթների, մրցույթների անցկացում | Ապրիլ | Զավուշյան Ժ | |
| 6 | Դասարաններում ստեղծել կանաչ անկյուններ և խնամել | ուստրի | Սարգսյան Գ<br>Զավուշյան Ժ | |
| 7 | Զրույցներ անցկացնել՝<br>ա/ Բնության պարգևները<br>բ/ ջուրը կյանք է<br>գ/ Մարդը և բնությունը<br>դ/ Սևանի հիմնախնդիրը լուծելի է<br>թեմաներով | ուստրի | Սարգսյան Գ<br>Զավուշյան Ժ | |
| 8 | Կարևորել օդի մաքրության նշանակությունը մարդկանց, բույսերի և ժողտնտեսության համար | մշտական | Դասղեկներ | |
| 9 | IY---YIII դասարաններում անցկացնել զրույցներ <Դպրոցականների դերը բնության պահպանության գործում>: | Մշտական | դասղեկներ | |

## 11. Բարոյաիրավագիտական դաստիարակություն

| ՀՀ | Աշխատանքի բովանդակություն | Ժամկետ | Կատարող անձ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Դասարաններում զրույցներ անցկացնել խղճի, ամոթի, արժանապատվության և բարոյական մյուս արժեքների մասին | Մշտական | Դասղեկներ | |
| 2 | Հանդիպումներ կազմակերպել անչափահասների գծով ոստիկանության տեսուչների հետ | Տարեկան մի քանի անգամ | Տեսուչ | |
| 3 | Երեխաներին ծանոթացնել իրենց իրավունքների և պարտականությունների հետ | Տարեկան մի քանի անգամ | Տեսուչ | |
| 4 | I---IX դասարաններում անցկացնել <Իրավունքը և անչափահասը> թեմայով զրույց, առանձնացնել տարիքային առանձնահատկությունները | Դեկտեմբեր | դասղեկներ | |
| 5 | Y---YII դասարաններում անցկացնել զրույցներ <Թմրանյութերը և անչափահասը>, <Թմրամոլությունը քրեորեն պատժելի է>, <Պատիվ և հպարտություն>, <Երեխաների բռնությունը ընտանիքում> թեմաներով | Տարվա ընթցքում | Ոստիկանության տեսուչ | |
| 6 | YIII-IX դասարաններում անցկացնել Խմիչքը հասարակության չարիքն է, ծխախոտը քայքայում է առողջությունը վերնագրերով զրույց: | Տարվա ընթացքում | Զինղեկ | |
| 7 | Անցկացնել բանավեճեր օրինազանցությունների, դրանց պատճառների, զինապարտության մասին: Կատարել քրեական օրենսգրքերի առանձին հոդվածների քննարկում | Տարված ընթացքում | Զինղեկ | |

12. Սեմինարների, բանավեճերի, հանդիպումների կազմակերպում

/1 ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

Դասղեկը և դասարանը:
Առաջին օրը դասարանում:
Բարձր դասարանցիները դպրոցում:
Ինչպե՞ս նախապատրաստել զրույցի ժամը:
Դասարանի ակտիվը և աշխատանք նրանց հետ:
Դասարանի ծնողական խորհուրդն ու ծնող-լիազորների պարտականությունները:
Հայրերի համար. <Քո կողքին տղամարդ է մեծանում>:

12/2 ԲԱՆԱՎԵՃԵՐ

1. Ի՞նչն է գեղեցկացնում մարդուն:
2. Երբ երեխան դարձել է դեռահաս:
3. Խոսում են միայն հայրերը:
4. Ու՞մ ենք համարում լավ մարդ:
5. Ո՞րն է առավել մարդու մեջ. Առավելությու՞ն, թե թերություն
6. Թրաֆիկինգ երևույթը և պայքարը այդ երևույթի դեմ:
7. Ի՞նչ գիտենք մեր իրավունքների և պարտականությունների մասին:
8. Համակարգչից օգտվելը օգու՞տ է, թե վնաս:

12/3 ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

1. Զրույց <Կամակորության վտանգները>:
2. Գեղեցիկը աղջկա վարքագծում:
3. Զրույց, դպրոցը, հայրը և երեխայի գնահատականն ու վարքը:
4. Սեպտեմբերի 21: Անելիքներ և սպասումներ:

անիքի և դպրոցի փոխներգործության հիմքում ընկած են միմյանց նկատմամբ թյան, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, տարրության ու հանդուրժողականության սկզբունքները:

ղների հետ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման, նպատակների իրականացման և երեխաների կրթական առավել նպաստավոր ների ու կրթական միջավայրի ստեղծման կարևոր նախադրյալն է: Մեր ներին, աշակերտներին ու ծնողներին միավորում են ընդհանուր ություններ և խնդիրներ, որոնց լուծումները պայմանավորված են դրանց գործության և համագործակցության բնույթով: Պետք է առաջնորդվել նրանով, ներն ու ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար ավետ դաստիարակություն կապահովվի, եթե ձևավորվում է դաստիարակության ացի միասնական նպատակներ, ձգտումներ:

## Ծնողների հետ աշխատելու ուղղությունները՝

Մշտական ուշադրության կենտրոնում պահել ծնողական խորհուրդի աշխատանքը, անել ընդհանուր ծնողական ժողովներ, լսել ծնողների կարծիքները և ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին՝

1.1 Ծնողական խորհուրդն ու նրա պարտականությունները
1.2 Դպրոցը և ընտանիքը
1.3 Դեռահասի մտավոր զարգացումը և դպրոցական դաստիարակությունը
1.4 Երեխայի հիգիենան իմանալու անհրաժեշտությունը և հիվանդությունների կանխարգելումը
1.5 Երեխայի դաստիարակությունը և զարգացումը մինչ դպրոց հաճախելը
1.6 Ծնողների ներգրավում դպրոցի, դասարանի գործերում
1.7 Ծնողխորհրդի նախագահի տարեկան հաշվետվություն /զեկուցող Ռ.Պետրոսյան/:
1.8 Ծնողական խորհրդի 2023-2024 ուստարվա կազմավորում /սեպտեմբեր/

14 Աշակերտական խորհուրդ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Աշակերտական ընդհանուր ժողովի հրավիրում | սեպտեմբեր | Աշակերտական խորհուրդ |
| 2. | Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություն /մասնակցել 8 անդամ/ | | |
| 3 | Աշակերտական խորհրդի հանձնախմբերի ձևավորում /5 հանձնախումբ/ | մշտական | Աշակերտական խորհուրդ |
| 4 | Դպրոցական աշակերտական հերթապահության հաստատում | | |
| 5 | Աշակերտական խորհրդի անդամներին ընդգրկել դպրոցի ողջ ուսումնական և դաստիարակչական աշխատանքներին: | | |
| 6 | Պարբերաբար հանդիպումներ կազմակերպել անչափահասների բաժնի տեսուչի հետ: | մշտական | Աշակերտական խորհուրդ |